ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2021թ. թիվ 99-Ա

ՀԵՂԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի տեղակալի 16.02.2021թ. զեկուցագիրը և հաշվի առնելով «Վանաձորի Հ.Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի 19.02.2021թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ առողջապահության նախարարի 28.09.2020թ. թիվ 24-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվան-դության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով հանրակրթական (բացառությամբ՝ նախադպրոցական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվող ՍԿ N 3.1.2-004-20 սանիտարական կանոնների» 5-րդ կետի 1-ին ենթակետի և 15-րդ կետի պահանջները խախտելու համար «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Հ.Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Հեղինե Կոստանյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարողին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2/22/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք.Վանաձոր